



Նարինե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հայցորդ,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության ավագ սպա,
փոխգնդապետ*

**ՄՔԳ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Միջազգային քրեական դատարանը (ՄՔԳ-ն) պետությունների ինքնիշխանության ուժով և կամավորության սկզբունքի հիման վրա ստեղծված միջազգային կառույց է, որը կոչված է ՄՔԳ կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվության ենթարկելուն:

ՄՔԳ-ն հիմնադրող, դատարանի լիազորությունները որոշող ու գործունեության կարգը սահմանող հիմնական փաստաթուղթը Հռոմի կանոնադրությունն է (Հռոմի ստատուտ), որը ներառում է դատարանին ընդդատյա հանցագործությունների տարբերը, ապացուցման կանոնները, ինչպես նաև շոշափում է այդ մարմնի գործունեության իրականացման առնչվող նյութական, դատավարական, ընթացակարգային խնդիրները: Կանոնադրությունն ընդունվել է 1998 թ. հուլիսի 17-ին և ուժի մեջ է մտել 2002 թ. հուլիսի 1-ին: 2018թ. սեպտեմբերի դրությամբ այն ստորագրել է 139 և վավերացրել 124 պետության կողմից:¹

Դատարանին ընդդատյա են մարդկության պատմությանը հայտնի ամենադաժան ու ծանր հանցագործությունները՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված, պատերազմական և ագրեսիայի հանցագործությունները (5-րդ հոդված), որոնք կատարվել են մասնակից-պետության տարածքում կամ մասնակից-պետության քաղաքացու կողմից: Դատարանի կողմից իրավիճակը քննելու համար Հռոմի կանոնադրության 12, 14 և

15-րդ հոդվածներով ամրագրված են որոշ մեխանիզմներ, որոնց գործողությունը հնարավոր է միայն Հռոմի կանոնադրության վավերացման պարագայում, սակայն որոշ բացառություններով.²

ՄՔԳ կանոնադրության 13-րդ հոդվածի համաձայն ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը՝ կազմակերպության կանոնադրության VII գլխում ամրագրված իր լիազորությունների շրջանակում, կարող է փոխանցել դատարանին այն իրավիճակը, որը տեղի է ունեցել ոչ մասնակից-պետության տարածքում, ոչ էլ կատարվել է մասնակից-պետության քաղաքացու կողմից:³

ՄՔԳ-ի իրավազորությունը ճանաչվում է պետությունների կողմից կանոնադրությունը վավերացնելու եղանակով: Կանոնադրության 120-րդ հոդվածի համաձայն՝ կանոնադրության վերաբերյալ որևէ վերապահում չի կարող արվել, ուստի փաստաթղթի կոշտ բնույթով պայմանավորված այն ստորագրած պետությունները առնչվում են ներպետական օրենսդրության հետ համապատասխանության որոշ խնդիրների: Իրավաբանական տեսանկյունից ամենաբարդ և քաղաքական առումով զգայուն խնդիրը՝ կանոնադրության և պետության սահմանադրության դրույթների միջև ծագած կոլիզիաների կանոնակարգումն է, որոնցից, գրեթե բոլոր մասնակիցների համար, ամենաախիճնականը միջազգային հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող սեփական քաղաքացիներին, ըստ ընդդատյան, դատարանին փոխանցելու

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

**ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն**

սահմանադրականության խնդիրն է՝:

Թեև կանոնադրությունը վավերացրած պետությունները ձեռք են բերել մեծ փորձ դրա դրույթներն ազգային օրենսդրություն ներմուծելու գործում, այնուամենայնիվ իմպլեմենտացիայի միասնական մոդել գոյություն չունի: Կանոնադրությունը վավերացրած երկրների մի մասը միջազգային իրավունքի փոխակերպումն իրականացնում են ներմուծման (ինկորպորացիայի) եղանակով (Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, Բելգիան, Մալտան, Պորտուգալիան), փոխակերպման (տրանսֆորմացիայի) եղանակով (Ավստրալիան, Գերմանիան, Վրաստանը, Իսպանիան, Ռումինիան, Սերբիան, Խորվաթիան), ընդհանուր կամ մասնավոր հղմամբ (Կանադան, Արգենտինան, Կոստա Ռիկան) կամ էլ դրսևորվում է խառը մոտեցում (Նոր Զելանդիան, Սլովակիան, Ուրուգվայը): Յուրաքանչյուր պետություն ազատ է իմպլեմենտացիայի մոտեցումների ընտրության մեջ, եթե այն գործում է միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու նպատակով: Ընդհանուր առմամբ՝ կանոնադրությունը բոլոր մասնակից պետությունների համար ստեղծում է միջազգային արարքների համընդհանուր քրեականացման մոդել՝ ազգային քրեաիրավական համակարգերի համապատասխան մասերի միավորմամբ⁵: Կանոնադրությունը ոչ միայն ՄՔԳ-ն հիմնադրող փաստաթուղթ է, այլև ունիվերսալ քրեական օրենսգիրք, որը նախատեսում է առանձնապես ծանր միջազգային քրեական հանցագործությունների տարրերը, ապացուցման կանոնները և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը⁶:

Հայաստանը ՄՔԳ-ի կանոնադրությունը ստորագրել է «ad referendum»⁷ 1999 թ. հոկտեմբերի 1-ին, սակայն առ այսօր այն չի վավերացրել: Միջազգային պայմանագրի ստորագրումը պայմանավորված է ոչ միայն քաղաքական գործոնով, այլև ունի իրավական նշանակություն.

ստորագրումից հետո իրավաբանական ուժ են ստանում այդ պայմանագրի վավերացման, ընդունման, դրան միանալու մասին դրույթները: Բարեխղճության սկզբունքը պայմանագիրը ստորագրած պետություններին պարտավորեցնում է ձեռնպահ մնալ այն բոլոր գործողություններից, որոնք կոժվարացնեն կամ անհնարին կդարձնեն պայմանագրի կատարումը, ինչպես նաև պայմանագրին հակասող բոլոր գործողություններից⁸:

Կանոնադրությունը վավերացնելու և դրա դրույթները Հայաստանի ազգային օրենսդրություն ներմուծելու համար, մեր դիտարկմամբ, պետք է լուծվի երեք հիմնական խնդիր. վերացվեն ՀՀ Սահմանադրության և ՄՔԳ կանոնադրության հնարավոր հակասությունները, համապատասխանեցվեն ներպետական քրեաիրավական կարգավորումները և ստեղծվի ՄՔԳ-ի հետ արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ իրավական բազա:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրական դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական այս նորմից հետևում է, որ միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, եթե դրանք հակասում են Սահմանադրությանը, ուստի ՄՔԳ-ի կանոնադրության վավերացմանը խոչընդոտող խնդիրներից առաջնայինը կանոնադրության սահմանադրական վերահսկողության հարցն է:

ՄՔԳ կանոնադրությամբ ամրագրված միջազգային պարտավորությունների ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշող ՀՀ Սահմանադրական դատարանի 2004 թ. օգոստոսի 13-ին կայացրած ՄԳՈ N502 որոշման (այսուհետ նաև՝ ՄԳ որոշում) համա-



Միջազգային իրավունք

ձայն ՄՔԴ կանոնադրության նախարանի 10-րդ մասը և 1-ին հոդվածը՝ առ այն, որ ՄՔԴ-ն լրացնում է ներպետական քրեական իրավագործության մարմինները, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության (1995 թ. խմբագրությամբ) 91-րդ և 92-րդ հոդվածներին, ինչպես նաև Կանոնադրության 105-րդ հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման և համաներման իրավունքի իրացումը, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության (1995 թ. խմբագրությամբ) 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17 կետի և 81-դ հոդվածի 1-ն կետի պահանջներին:

ՄՔԴ կանոնադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ ազատագրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ դատարանի դատավճիռը պարտադիր է մասնակից պետությունների համար, որոնք ոչ մի դեպքում չեն կարող փոփոխել այն, իսկ 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատավճիռի իրականացման պետությունը՝ չի կարող անձին ազատ արձակել մինչև դատարանի դատավճռով նշանակված պատժի ժամկետի լրացումը: Այս հիմքով ՀՀ Սահմանադրական դատարանն իր վերոնշյալ որոշման 17-րդ կետում եզրահանգել է, որ կանոնադրության 5-րդ հոդվածում նախատեսված հանցագործությունների համար դատարանի կողմից դատապարտված անձինք չեն կարող օգտվել ներում ստանալու, ինչպես նաև իրենց նկատմամբ համաներման կիրառման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատագրկման ժամկետի կրճատման հնարավորությունից, և համապատասխանաբար՝ ՀՀ նախագահը չի կարող այդ անձանց նկատմամբ իրացնել ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17 կետով նախատեսված՝ դատապարտյալներին ներում շնորհելու իրավունքը, իսկ ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ Սահմանադրության 81 հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ համաներում հայ-

տարարելու իրավունքը:

Չառարկելով ՄԴ որոշմամբ ամփոփված կանոնադրության որոշ դրույթների Սահմանադրականության խնդիրները, այսուհանդերձ հարկ է նշել, որ որոշմամբ վկայակոչված ներման, համաներման ինչպես նաև ազատագրկման ժամկետի կրճատման ՀՀ ընդհանուր իրավագործության ներքո գտնվող անձանց սահմանադրական իրավունքները վերապահված են ներպետական օրենսդրությամբ նախատեսված քրեորեն պատժելի արարքների համար դատապարտված անձանց, մինչդեռ միջազգային քրեական հանցագործություններն իրենց բնույթով, վտանգավորության աստիճանով ու հետևանքների գլոբալ ներգործության առումով ծանր հանցագործություններ են, որոնցից շատերը նախատեսված չեն ներպետական օրենսդրությամբ և այս առումով խնդիրն առնվազն մասնագիտական քննարկումների առարկա կարող է հանդիսանալ:

Ինչ վերաբերում է ազատվելու կամ ազատագրկման ժամկետի կրճատման հնարավորությանը, ապա կանոնադրությամբ նախատեսված է դատապարտված անձանց ազատագրկման ժամկետի կրճատման համաչափ ինստիտուտ, որն, ի դեպ, ավելի բարենպաստ է, քան ներպետական օրենսդրության կարգավորումները: Կանոնադրության 110-րդ հոդվածի 2-րդ 3-րդ կետերի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կրճատելու պատժի ժամկետը դատապարտյալին լսելուց հետո, և եթե անձը կրել է պատժի 2/3-ը, իսկ ցմահ ազատագրկման դեպքում 25 տարին, ապա Դատարանը վերանայում է իր դատավճիռը՝ պատժի ժամկետի կրճատման հնարավորությունը որոշելու համար:

«Ներման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ներումը մարդասիրական դրսևորում է, որի միջոցով Հայաստանի Հանրապետության նախագահը նույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանցագործության համար դատապարտված անձին կարող է լրիվ կամ

մասնակիորեն ազատել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից կամ պատժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով: Ներում շնորհելու դեպքերը սահմանող նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին ներում չի շնորհվում, իսկ ցմահ ազատագրկման դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է ազատագրկման ոչ պակաս, քան քսան տարին:

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից որոշների և խոշտանգման հանցակազմերը ներառված են նաև Կանոնադրության 7-րդ և 8-րդ հոդվածներում և ընդդատյա են ՄԲԳ-ին, ուստի վերոնշյալ ներպետական և միջազգային իրավանորմների համեմատական վերլուծությունից հետևում է, որ ըստ ՀՀ ներպետական իրավակարգավորումների՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձանց ներում ստանալու իրավունքը սահմանափակված է, մինչդեռ այդ իրավունքը նշված անձանց համար կարող է գործել ՄԲԳ կանոնադրության 110-րդ հոդվածի ուժով, որն, ըստ էության, ավելի բարենպաստ է, քան վկայակոչված ներպետական իրավակարգավորումները:

Նկատի ունենալով, որ ՄԲԳ-ին ընդդատյա են միայն ծանր հանցագործությունները կարևոր է նշել, որ կանոնադրությամբ նախատեսված դատավարական կանոններն իրենց բնույթով, այդ թվում պատժի մեղմացման իմաստաբանությամբ պատժի կրման ժամկետի կրճատման հնարավորությունը, ոչ միայն չեն հակասում ներպետական իրավական համակարգին, այլև ամբողջովին

համահունչ են ՀՀ օրենսդրության ոգուն և տրամաբանությանը:

Ինչպես արդեն նշվեց, ՄԲԳ-ն գործում է փոխլրացման սկզբունքով, ինչը նշանակում է, որ դատարանը կարող է քննել հանցագործությունը միայն այն դեպքերում, երբ պետությունը, որի տարածքում կատարվել է հանցագործությունը կամ որի քաղաքացին հանցագործություն է կատարել, չի ցանկանում, կամ ի վիճակի չէ պատշաճ իրականացնել հետաքննությունը կամ քրեական հետապնդումը, իրականացված քննչական և դատախազական գործունեությունը չեն համապատասխանում միջազգային դատավարական չափանիշներին, ակնհայտ է մեղադրյալին քրեական պատասխանատվությունից պաշտպանելու նպատակը (17-րդ հոդվ.), այսինքն՝ Կանոնադրության 5-րդ հոդվածով նախատեսված ծանր հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց նկատմամբ իրավագործություն իրականացնելով, դատարանը լրացնում է ներպետական իրավագործության մարմինները: Բացի դրանից՝ կանոնադրության 19-րդ հոդվածը տվյալ գործի նկատմամբ իրավագործություն ունեցող պետությանը հնարավորություն է տալիս վիճարկել գործը վարույթ ընդունելու դատարանի իրավագործությունն այն հիմքով, որ պետությունը տվյալ գործով քննություն կամ կասկածյալի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացնում կամ իրականացրել է:

Կանոնադրությամբ ամրագրված է նաև «Ne bis in idem» իրավական դոկտրինը, որով, ըստ էության, դատարանն ու ներպետական քրեական իրավագործության մարմինները փոխլրացնում են միմյանց: Կանոնադրության 20-րդ հոդվածի դիսպոզիցիան սահմանում է, որ անձը չի կարող մեկ այլ դատարանի կողմից դատապարտվել այն հանցագործության համար, որի համար Գատարանի կողմից նա դատապարտվել է և հակառակը՝ մեկ այլ դատարանի կողմից դատապարտ-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



ված որևէ անձ նույն արարքի համար չի կարող դատապարտվել դատարանի կողմից⁹:

Ներպետական քրեական իրավագործության մարմինները լրացնող ՄԶԴ բնույթը դրսևորվում է նաև, որ կանոնադրությամբ նախատեսված է մեղադրյալի(ների) նկատմամբ քննությունը դատախազի կողմից իրավագոր պետությանը փոխանցելու հնարավորություն, եթե պետությունը կանոնադրությամբ սահմանված ժամկետում դատարանին տեղեկացնում է, որ մեղավոր անձի (անձանց) նկատմամբ քննություն է իրականացվում կամ իրականացվել է:

Այսպիսով՝ պետություններին վերապահվում է ավանդական հիմունքներով ներպետական դատարանների ընդդատության ներքո (հանցագործության օբյեկտի և սուբյեկտի, տարածքային և պետական շահերի սկզբունքներով) միջազգային հանցագործությունների վերաբերյալ քննություն իրականացնելու, մեղադրանք առաջադրելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու առաջնային իրավունք: Այսուհանդերձ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ եզրահանգել է, որ կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով նախատեսված՝ ներպետական քրեական իրավագործության մարմինների լրացման դրույթը չի բխում ՀՀ Սահմանադրության (1995 թ. խմբագրությամբ) 91 և 92 հոդվածներով ամրագրված նորմերից: Արդարադատության իրականացումը հանդիսանում է դատարանների բացառիկ իրավասությունը: Դատական իշխանությանը վերաբերող ՀՀ Սահմանադրության 9-րդ գլուխը, հստակորեն սահմանելով ՀՀ դատական իշխանության համակարգը, չի նախատեսում որևէ դրույթ, որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ քրեական իրավագործություն իրականացնող դատական մարմինների համակարգը՝ քրեական իրա-

վագործության միջազգային դատական մարմնով:

Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրական դատարանը Որոշման 18-րդ կետում եզրահանգել է՝ «Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 6-րդ մասի դրույթները, ՀՀ սահմանադրական դատարանը՝ ելնելով նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայից, հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կճանաչի Միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավագործությունը՝ որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին»¹⁰:

ՄԴ որոշումից ի վեր ՀՀ Սահմանադրությունը փոփոխվել է 2005 թ. և 2015 թ. կատարված սահմանադրական փոփոխություններով, ու թեև իր որոշմամբ Սահմանադրական դատարանը հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որի արդյունքում միայն հնարավոր կլինի ՄԶԴ իրավագործության ճանաչումը, այդուհանդերձ պետք է արձանագրել, որ Կանոնադրությունը ստորագրումից ի վեր կատարված սահմանադրական բարեփոխումները որևէ կերպ չեն անդրադարձել ՀՀ Սահմանադրության այն հոդվածներին, որոնց դրույթները, ըստ որոշման, անհամատեղելի են կանոնադրության որոշ սկզբունքների հետ: 2015 թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո կանոնադրության վավերացմանը խոչընդոտող սահմանադրական դրույթների բովանդակությունն, ըստ էության, չի փոփոխվել և ներկայումս Սահմանադրության 163, 164, 135, 117-րդ հոդվածներով սահմանված նորմերը խոչընդոտում են ՄԶԴ կանոնադրության վավերացմանը, ուստի և անհնարին են դարձնում միջազգային ծանր հանցագործություններ կատարած անձանց դատապարտելու, անպատժելիության մթնոլորտը վերացնելու,

ինչպես նաև ՄՄԻ-ի խախտումները կանխարգելող կարևորագույն միջազգային կառուցակարգերից մեկի՝ ՄՔԳ-ի իրավագործությունը ՀՀ տարածքում:

Հայաստանի կողմից ՄՔԳ կանոնադրության վավերացման նպատակահարմարության քննարկումները՝ ինչպես մասնագիտական այնպես էլ քաղաքական շրջանակում վերսկսվեցին 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից ՄՄԻ-ի կոպիտ խախտումների, ինչպես նաև հակառակորդի զինձառայողների կողմից առանձին դաժանությամբ կատարված պատերազմական հանցագործությունների վերաբերյալ: Նշված հանցագործությունները այդպես էլ չստացան իրենց քրեաիրավական գնահատականը, իսկ մեղավորները հերքական անգամ խուսափեցին միջազգային քրեական պատասխանատվությունից, քանի որ ո՛չ Հայաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը չեն վավերացրել ՄՔԳ կանոնադրությունը, իսկ դատարանին ընդդատյա են միայն մասնակից-պետության տարածքում կամ մասնակից-պետության քաղաքացու կողմից կատարված վերոնշյալ հանցագործությունները:

Կանոնադրությանը չմիացած երկրի տարածքում կամ տվյալ երկրի քաղաքացու վերաբերյալ իրավիճակը կարող է փոխանցվել դատարանի քննությանը, նաև ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ, սակայն հաշվի առնելով այն, որ իրավիճակը ՄՔԳ հանձնելու վերաբերյալ բանաձև ընդունելու համար անհրաժեշտ է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բոլոր մշտական անդամների համաձայնությունը, կարելի է ենթադրել, որ գործնականում մնամորիանակ բանաձևերն ընդունվում են բացառիկ դեպքերում (մնամորիանակ որոշում դատարանի գործունեության ողջ ընթացքում կայացվել է միայն Դարֆուրի գործով¹¹):

Չնայած միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի

կարևոր դերակատարությանը, այդուհանդերձ ՄՔԳ գործունեության գրավականը՝ պետությունների համագործակցությունն է, քանի որ վերջին հաշվով դատարանի իրավագործությունը ճանաչած երկրների քանակն է որոշելու դատարանի արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից է համագործակցությունը Եվրոպական միության հետ, որի շրջանակում 2017 թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում ԵՄ արևելյան գործընկերության գագաթնաժողովի ընթացքում Հայաստանն ու Եվրամիությունը ստորագրեցին Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն **համապարփակ և ընդլայնված գործընկերության** համաձայնագիրը (ՀԸԳՀ (SEPA)), ինչը կրկին քաղաքական օրակարգ մտցրեց Հայաստանի կողմից ՄՔԳ կանոնադրության վավերացման հարցը:

ՀԸԳՀ 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամենալուրջ հանցագործությունները չպետք է անպատիժ մնան և դրանց արդյունավետ քրեական հետապնդումը պետք է ապահովվի՝ ազգային և միջազգային մակարդակով, այդ թվում՝ Միջազգային քրեական դատարանի մակարդակով միջոցներ ձեռնարկելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Կողմերի նպատակը պետք է լինի խաղաղության և միջազգային արդարադատության խթանման հարցում համագործակցության ամրապնդումը՝ Միջազգային քրեական դատարանի ՄՔԳ կանոնադրությունը և դրան հարակից փաստաթղթերը վավերացնելու և կիրարկելու միջոցով, ինչպես նաև հաշվի առնելով դրանց իրավական և սահմանադրական շրջանակները»¹²:

Եվրամիության բազմավեկտոր համագործակցությունը Հայաստանի հետ ընդհանում է «Շատը շատի դիմաց» կարգախոսի ներքո, ինչն ուղղակիորեն շեշտադրում է Հայաստանի կողմից ստանձնված միջազգային պարտավորու-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



բյուրոների բարեխիղճ ու միաժամանակ կատարման կարևորությունը Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների հետագա զարգացման հարցում, ուստի այս պայմաններում ակնհայտ է, որ կանոնադրության վավերացմանն ուղղված գործընթացներն այլևս պետք է իրատեսական բնույթ ստանան:

Միջազգային հարաբերությունների տարբեր ձևաչափերում Հայաստանը մշտապես հանդես է գալիս Միջազգային հանցագործությունների՝ մասնավորապես ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեմ խիստ քննադատությամբ, որպես միջազգային հարաբերությունների դերակատար ակտիվ մասնակցում է միջազգային հանցագործությունների դատապարտմանն ու կանխարգելմանն ուղղված բանաձևերի ընդունմանը և տվյալ համատեքստում Հայաստանի համար ՄԲԴ կանոնադրության վավերացումը կարևոր է ոչ միայն իրավական ու քաղաքական, այլև բարոյական տեսանկյունից: Այս առումով տեղին է անդրադառնալ «Միջազգային քրեական դատարանի համար» կոալիցիայի Հայոց ցեղասպանության 100-ամյակին ՀՀ նախագահին ուղղված նամակին, որում Կոալիցիան կոչ է անում Հայաստանին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ միանալու ՄԲԴ-ի 123 այլ պետություններին և աջակցել վերջ դնելու անպատժելիությանը:

«Միանալով ՄԲԴ-ին՝ Հայաստանը կարող է հարգանքի տուրք մատուցել անցյալ, ներկա և ապագա զոհերին և ապահովել, որ «Այլևս երբեք» կարգախոսը դառնա իրականություն՝ աջակցելով վերջ դնել ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների համար անպատժելիությանը»¹³, - ասվում է կոալիցիայի եվրոպական տարածաշրջանի համակարգող Քիրստեն Միերսթերթ Դուխենսի նամակում:

2000-2003 թթ. ընթացքում ԵՄ բոլոր անդամ-պետությունները, այդ թվում

նաև ԵՄ-ին անդամակցելու թեկնածու-երկրները, ինչպես նաև Եվրոպական երկրների մեծամասնությունը վավերացրել են կանոնադրությունը, ընդ որում՝ առանց բացառության բոլոր պետությունները հաղթահարել են կանոնադրության և ներպետական օրենսդրության կոլիզիաները: Եվրոպայի խորհուրդի անդամ պետությունների մեծամասնությունը նույնպես վավերացրել են կանոնադրությունը, և Հայաստանն այսօր գտնվում է այն չվավերացրած երկրների՝ Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Ուկրաինայի, Մոլդովայի շարքում:

Կանոնադրության վերաբերյալ քաղաքակիրթ պետությունների միասնականությունը ի ցույց է դնում Կանոնադրության վավերացման անհրաժեշտության այն ընկալումը, որ կանոնադրության նորմերը որակվում են որպես միջազգային սովորության իրավունքի հանրաճանաչ նորմեր և սկզբունքներ, որոնք ենթակա են կատարման, ուստի և Կանոնադրության վավերացման անհիմն հետաձգումը կարող է Հայաստանի Հանրապետությանը՝ ուղակի կամ անուղակի կերպով, հակադրել եվրոպական ազգերի ընտանիքին:

Ներկայումս չունենալով որևէ քաղաքական հիմնավորված պատճառաբանություն և անհաղթահարելի իրավական խոչընդոտ, ՄԲԴ կանոնադրության վավերացման հեռանկարները դեռ տեսանելի չեն, մինչդեռ Եվրոպական միության հետ ընդլայնվող փոխգործության շրջանակում կանոնադրության վավերացումը պարտադիր նախապայման է:

Ամփոփելով Հայաստանի Հանրապետության կողմից ՄԲԴ կանոնադրության վավերացման հիմնախնդիրների շուրջ սույն հոդվածում ծավալված ուսումնասիրությունները՝ անհրաժեշտ ենք համարում նախանշել իրավական և քաղաքական այն բարենպաստ հանգամանքները, որոնք ակնկալելի են Կանոնադրության վավերացման գործընթացի արդյունքում:

ՄԲԴ կանոնադրության «Պատերազ-

մական հանցագործություններ» վերա-
ռությամբ 8-րդ հոդվածում ամբողջ ծա-
վալով ներառված են ժնկյան կոնվենցիա-
ներով և I լրացուցիչ արձանագրությամբ
նախատեսված լուրջ խախտումները: Ի
կատարումն ժնկյան կոնվենցիաներով և
դրանց լրացուցիչ արձանագրություննե-
րով ստանձնած միջազգային պարտա-
վորությունների՝ ՄՄԻ-ի լուրջ խախտում-
ները ներառված են նաև ՀՀ քրեական
օրենսգրքի 390-րդ հոդվածում: ՄՄԻ-ի
լուրջ խախտումների հանցակազմերը
ներպետական քրեախրավական համա-
կարգ ներմուծումը թեև համահունչ է զին-
ված ընդհարումների մարդասիրական
պաշտպանության հատուկ պահանջնե-
րին, այդուհանդերձ դրանց կատարումը
դժվար է պատկերացնել առանց միջազ-
գային և ազգային մակարդակներում
հստակ սահմանված օրենսդրական և
կառուցակարգային մեխանիզմների գոր-
ծողության:

Կանոնադրության վավերացումը
չի ազատում Հայաստանի Հանրա-
պետությանը միջազգային քրեական
հանցագործության(ների) կատարման
մեջ մեղադրվող անձանց պատասխա-
նատվության ենթարկելու իրավունքից,
այլ փոխլրացման սկզբունքի ուժով հնա-
րավորություն է ընձեռնում Կանոնադրու-
թյան դրույթների ներպետական իրավա-
կան համակարգ ներմուծելու միջոցով
ձևավորել միջազգային քրեական հան-
ցագործությունների վերաբերյալ ունի-

վերսալ ընդդատության համակարգ, որի
պարագայում հնարավոր կլինի իրակա-
նացնել ըստ էության միջազգային քրեա-
կան արդարադատություն՝ ներպետա-
կան արդարադատության համակարգի
միջոցով:

Հայաստանի կողմից ՄՔԳ-ի իրավա-
գործության ճանաչումը և միջազգային
քրեական հանցագործությունների դեմ
պայքարի ու կանխարգելման ոլորտում
համագործակցությունը կնպաստի երկրի
արդարադատության համակարգի և ներ-
պետական օրենսդրությունն արդիակա-
նացմանն ու բարելավմանը, ինչը կայուն
իրավական հենք կձևավորի Եվրոպայի
միության անդամ-պետությունների հետ
առավել արդյունավետ փոխգործության
համար:

ՄՔԳ-ի կանոնադրության վավերա-
ցումը կբարձրացնի երկրի վարկանի-
շը, հաշվի առնելով այն հանգամանքը,
որ Կանոնադրությանը միացող ամեն մի
անդամ-պետություն ամրապնդում է դա-
տարանի դիրքը, մեծացնում ներուժն ու
ընդլայնում նրա տարածքային իրավա-
գործությունը, Հայաստանը կինտեգրվի
քաղաքակիրթ և ժողովրդավար երկրների
ընտանիքին, որոնք հարգում են միջազ-
գային իրավունքը և նպատակադրված են
գլոբալ մասշտաբով հաղթահարելու ցե-
ղասպանության, մարդկության դեմ, պա-
տերազմական և ագրեսիայի հանցագոր-
ծությունները:

¹ Տե՛ս <http://iccnw.org/?mod=world> 06.08.2019
թ.
² Տե՛ս [https://www.icc-cpi.int/resource-library/
Documents/RS-Eng.pdf](https://www.icc-cpi.int/resource-library/Documents/RS-Eng.pdf) (12.08.2019 թ.)
³ Տե՛ս [https://www.un.org/ru/sections/un-charter/
chapter-vii/index.html](https://www.un.org/ru/sections/un-charter/chapter-vii/index.html) (07.08.2019 թ.)
⁴ Տե՛ս Plachta M. Non-Extradition of Nationals:
a Never Ending Story// Emory International
Law Review.1999. Vol.1, N1, p.77-159;
Deen-Racsmby Z. Blekxtoon R. The
Decline of the Nationality Exception in
European Extradition?//European Journal of

Crime,Criminal Law and Criminal Justice.2005.
Vol.13,N3, p. 317-364.
⁵ Трикоз Е.Н., Перспективы присоединения
РФ к Римскому Статуту международного
уголовного суда//Журнал Российского права.
2007, № 12, с.133.
⁶ Wilkitzki P., The German law on cooperation
with the ICC // International Criminal Law
Review, 2002, №2, P. 195-212.
⁷ Միջազգային պայմանագրերի իրավունքի
դոկտրինալ կոդիֆիկացիայի ամերիկյան
իրավունքի ինստիտուտի (ALI) մեկնա-



Միջազգային իրավունք

բանություններում «*ad referendum*» ստորագրությունը ենթադրում է վավերացման ենթակա ցանկացած պայմանագիր: <https://students-library.com/library/read/2182-znacenie-podpisania-ad-referendum-soglasenij-vyrabotannyh-na-peregovorah-vnutrigosudarstvennoe-tolkovanie-tekstasoglasenij> 24.07.2019 թ.

⁸ Վ. Քոչարյան, Միջազգային իրավունք (ուսումնական ձեռնարկ), Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 2002, էջ 108-109:

⁹ Նույն հոդվածով նախատեսված են բացառություններ այն դեպքերի համար, երբ մեկ այլ դատարանում դատավարությունն իրականացվել է տվյալ անձին դատարանին ընդդատյա հանցագործության կատարման համար պատասխանատվության ենթարկելուց պաշտպանելու համար և չի իրականաց-

վել անկախ և անկողմնակալ միջազգային իրավունքում ընդունված օրինական պատշաճ ընթացակարգի նորմերին համապատասխան (...):

¹⁰ 2004 թ. օգոստոսի 13-ի N ՍԳՌ-502 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4820> (06.08.2019 թ.).

¹¹ Տե՛ս ՄԱԿ-ի ԱԽ 2005 թ. N 1593 բանաձևը <https://www.icc-cpi.int/NR/rdonlyres/85FEBD1A-29F8-4EC4-9566-48EDF55CC587/283244/N0529273.pdf> (06.08.2019 թ.).

¹² Տե՛ս https://eeas.europa.eu/sites/eeas/files/euarmeria_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf (28.07.2019 թ.).

¹³ Տե՛ս http://iccnow.org/documents/CICC_Armenia_CGJ_May_2015_Press_release_FINAL_AR.pdf (06.08.2018 թ.).

RESUME - РЕЗЮМЕ

ISSUES OF RATIFICATION AND IMPLEMENTATION OF THE ICC STATUTE IN THE NATIONAL LEGAL SYSTEM

N. Karapetyan

*Applicant at the Faculty of Law of YSU, Ministry of Defence of the RA,
a Senior Officer of the Legal Department*

This article is devoted to issues related to the ratification of the ICC Statute and the recognition of the Statute jurisdiction on the territory of the Republic of Armenia. The article highlights the main obstacles to ratification and implementation of the Statute provisions in RA legislation. Prioritizing the issues of constitutional review, a comparative analysis of the arguments substantiating the decision of the Constitutional Court N502 of 2004, as well as the problematic issues pertaining the compatibility of RA legislation and ICC Statute is performed. The expediency of the Statute ratification by Armenia is justified both from the point of view of legal and political aspects, as well as the obligatory fulfillment of the international obligations, and from the perspective of the enhancement of efficiency of further cooperation with the EU.

Keywords: *ICC Statute, International Criminal Court, Implementation, Ratification Problems, Domestic Legal System, SEPA, International Obligations, constitutional review.*

ЗАДАЧИ РАТИФИКАЦИИ И ИМПЛЕМЕНТАЦИИ СТАТУТА МУС В НАЦИОНАЛЬНУЮ ПРАВОВУЮ СИСТЕМУ

Н. Карапетян

Соискатель юридического факультета ЕГУ, старший офицер юридического управления МО РА

Данная статья посвящена анализу вопросов ратификации и признания юрисдикции Статута МУС на территории Республики Армения. В статье освещаются основные препятствия на пути ратификации Статута и имплементации его положений. Исходя из приоритета вопросов конституционного контроля дается сравнительный анализ аргументов, обосновывающих решение Конституционного Суда N502 от 2004 года и вопросов совместимости с национальным законодательством некоторых положений Статута. Целесообразность ратификации Статута обоснована как с юридической и политической точек зрения, так и с точки зрения обязательного выполнения международных обязательств и эффективности дальнейшего сотрудничества с Европейским союзом.

Ключевые слова: *Статут МУС, Международный уголовный суд, имплементация, проблемы ратификации, внутригосударственная правовая система, SEPA, международные обязательства.*

Բանալի բառեր - *ՄԶԳ կանոնադրություն, սրահուր, Միջազգային քրեական դատարան, ինպիւ-մենրացիա, վավերացման խնդիրներ, ներպետական իրավական համակարգ, ՍԵՊԱ, միջազգային պարտավորություններ, սահմանադրական վերահսկողություն:*

Ն. Կարապետյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հայցորդ, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության սվլազ սպա, փոխգնդապետ, էլ. փոստ՝ milllawyer@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 23.08.2019, տրվել է գրախոսության՝ 23.08.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. քնննաժողովից, ընդունվել է տպագրության՝ 24.10.2019

ՄԵՊՏԵՍԵՄԵՐ - ՀՈԿՏԵՄԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն